ԳՆԱՀԱՏՈՒՄ

# ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՐԳԵՎԸ՝ ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐԻՆ

*Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար, հատուկ պատվոգրեր հանձնեց մի խումբ արվեստագետների, այդ թվում՝ բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարին, ռեժիսոր Նանա Ջորջաձեին, դերասան Գուրանդա Գաբունիային, նկարիչ Ռադիշ Թորդիային:*



- Մի քանի օր առաջ, այս հարգարժան անձնավորությունները նշեցին հոբելյանները: Ցանկանում եմ մեծ սիրով ողջունել ու շնորհավորել, նախ՝ մաղթել առողջություն, քանզի մեր երկրի զարգացման, առաջընթացի գործում նշանակալի ավանդ ներդրած այս մարդկանց գոյությունը վիթխարի նշանակություն ունի: Ցանկանում եմ պատվոգրեր հանձնել մեր մշակույթում ներդրած մեծ ավանդի համար եւ մաղթել քաջ առողջություն,- միջոցառմանը հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

# ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ




Հայաստանում, օգոստոսի 28-ին, առաջին անգամ տեղի ունեցավ վրաց-հայկական մշակութային օր: Մայրաքաղաք Երեւանի կենտրոնում գտնվող Ազատության հրապարակում նախ՝ անցկացվեց նորաձեւության ցուցադրություն, այնուհետեւ՝ համերգային ծրագիր, բացօթյա փարթի՝ վրաստանցի եւ հայաստանցի լավագույն դիզայներների, երգիչների, պարողների մասնակցությամբ:

«Ընկերությունը հաղթում է»՝ կարգախոսն ունեցող միջոցառումը մարդաշատ էր:

Միջոցառման կազմակերպիչ «ArmMod Fashion» նախագծի ղեկավար՝ Ռուբինա Գրիգորյանը բացման արարողությանն ընդգծեց, որ օրերը նպատակ ունեն նպաստել երկու երկրների բարիդրացիական հարաբերություններին ու վրացիներին առավել մոտիկից ծանոթացնել Հայաստանի հետ:

- Հայերս շատ ենք սիրում լինել Վրաստանում, այս միջոցառման միջոցով էլ կփորձենք գրավել վրացի տուրիստներին, հույս ունենք նաեւ, որ այս օրը կամուրջ կդառնա հայ եւ վրացի դիզայներների հետագա համագործակցության համար,- ասաց Գրիգորյանը՝ հավելելով, որ նախապես ուսումնասիրել է վրացի դիզայներների աշխատանքները, այնուհետեւ՝ հանդես եկել առաջարկով, որն էլ սիրով ընդունվել է:

Երեւանում գտնվող MISS WORLD GEORGIA 2017-ին Վրաստանը ներկայացրած Քեթի Շեկելաշվիլին՝ լրագրողների հետ հանդիպմանը ուրախությամբ նշեց, որ. «Հայերը շատ ջերմ են, ժպտում են ու զրուցում մեզ հետ: Շատ հավանեցի նաեւ հայկական խոհանոցը, ճաշակեցինք ազգային ուտեստներ, ամեն ինչ շատ համեղ էր, չէի սպասում: Ինչ վերաբերում է միջոցառմանը, կարծում եմ, այն յուրահատուկ էր: Սա միավորում է երկու երկրների մշակույթը եւ մեր բարեկամության ու փոխհարգանքի արտահայտումն է»,- շնորհակալություն հայտնելով կազմակերպիչներին՝ հավելեց, որ նման միջոցառում հաջորդ անգամ տեղի ունենա Վրաստանում:

Վրաց-հայկական նորաձեւության շարունակական պատվավոր հյուրերի թվում էր Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն:

ԿՐԹԱԿԱՆ

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱՆ 27 906 ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

## 10 614 ՈՒՍԱՆՈՂ ԿՍՏԱՆԱ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

*Ինչպես տեղեկացրեց Վրաստանի գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, միասնական ազգային քննությունները հաջողությամբ անցել են 27 906 երիտասարդներ, ովքեր կազմում են դիմորդների ընդհանուր թվի 70 տոկոսը:*

შეფასებისა და გამოცდების ეროვნული ცენტრი

Նրա տեղեկությամբ՝ պետական ֆինանսավորում կտրվի 10 614 ուսանողի, որոնցից 6 543-ը կստանան ուսումնական դրամաշնորհներ, իսկ 4 071-ը՝ ուսման վարձի ֆինանսավորում:

- Պետական ֆինանսավորման արժանացածներից հազար ուսանողներ կստանան ուսման 100 տոկոսանոց ֆինանսավորում, 1 500-ը՝ 70, իսկ 4 հազարը՝ 50 տոկոսանոց ֆինանսավորում: Ընդհանուր առմամբ, այն դիմորդների թիվը, ովքեր ազգային քննությունների արդյունքներով արժանացել են պետական դրամաշնորհի, կազմում է 6 500, իսկ մյուսներն ընդունվել են պետության կողմից ֆինանսավորվող ֆակուլտետներ,- հայտարարել է Մայա Միմինոշվիլին:

Ինչ վերաբերում է վրաց լեզվի ուսուցման «1+4» ծրագրին, ապա դրանում գրանցվել է 1211 դիմորդ: Մայա Միմինոշվիլու խոսքով, այս տարի այդ ծրագրում գրանցվածների թիվն ավելացել է:

Անդրադառնալով քննությունների արդյունքների բողոքարկման թեմային, Մայա Միմինոշվիլին նշել է, որ, արդյունքների հրապարակումից հետո ստացած միավորների կամ կոնկրետ առաջադրանքի բողոքարկման իրավունքից օգտվել է դիմորդների 2 տոկոսը:

# ԱՎԵԼԱՑԵԼ Է ՎՐԱՑ ԼԵԶՎԻ «1+4» ԾՐԱԳՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹԻՎԸ

## 425 ՎՐԱՍՏԱՆՑԻ ՀԱՅԱԶԳԻ ԴԻՄՈՐԴՆԵՐ ԴԱՐՁԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

*Ինչպես հայտարարել է Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, վրաց լեզվի նախապատրաստական ուսումնական ծրագրին գրանցված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ դիմորդների թիվն այս տարի ավելացել է: Այս տարի շուրջ 425 վրաստանցի հայազգի դիմարորդներ դարձել են ուսանողներ:*

Նրա տեղեկությամբ՝ ծրագրին գրանցված 1211 դիմորդ դարձել է ուսանող՝ անցյալ տարվա 1047-ի դիմաց: Այդ թվում՝ հայ եւ ադրբեջանցի դիմորդներ: Այս տարի ծրագրին գրանցվել եւ ուսանող են դարձել նաեւ օսալեզու դիմորդներ:

- Ինչ վերաբերում է վրաց լեզվի նախապատրաստական ծրագրին, դիմորդների քանակն ավելացել է: Սա շատ լավ միտում է: Դա վերաբերում է մեր ազգային փոքրամասնություններին,- հայտարարել է Մայա Միմինոշվիլին:

Վրաց լեզվի ուսուցման «1+4» ծրագրի ուսանող են դառնում այն դիմորդները, որոնք հանձնել են ընդհանուր հմտությունների քննություն հայերեն կամ ադրբեջաներեն, կամ օսերեն լեզուներով:

Ինչպես գիտեք, արդեն գործող, նախապատրաստական «1+4» ծրագիրը մշակվել է ազգային փոքրամասնությունների համար: Մեկ տարվա ընթացքում ուսանողները տիրապետում են վրացերենին, իսկ ապա հնարավորություն ունեն չորս տարի բակալավրային ծրագիրն անցնել ցանկալի մասնագիտությամբ:

Առաջին տարվա վերջին, 60 կրեդիտ հավաքելու դեպքում, ուսանողները հնարավորություն ունեն, առանց քննության, ուսումը շարունակել Թբիլիսիի, Քութայիսիի, Բաթումիի եւ մյուս քաղաքների համալսարանների ցանկալի ֆակուլտետներում:

Նշենք, որ ընդհանուր հիմունքներով Վրաստանի բուհ է ընդունվել եւս 83 հայազգի դիմորդ:

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԹԱՓՈՒՐ Է ՄՆԱՑԵԼ 14 569 ՏԵՂ



Ինչպես հայտարարել է Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, միասնական ազգային քննություններին՝ իմացության նվազագույն մակարդակը հաղթահարել, սակայն համալսարան ընդունվելու համար միավորների բավարար քանակ չեն կարողացել հավաքել 482 դիմորդներ:

Նրա տեղեկությամբ՝ քննությունների համար գրանցված շուրջ 39 հազար դիմորդներից իմացության նվազագույն մակարդակը չեն հաղթահարել կամ քննությանը չեն ներկայացել մոտ 12 հազար դիմորդներ:

Մայա Միմինոշվիլու հայտարարությամբ, անցյալ տարվա համեմատությամբ, բուհ ընդունված դիմորդների թիվն ավելացել է մեկ տոկոսով: Թեպետ, ինչպես պարզվեց, դա էլ բավարար չէ համալսարաններում թափուր տեղերի զբաղեցման համար: Ինչպես նշել է Մայա Միմինոշվիլին, ընդհանուր առմամբ, երկրի համալսարաններում, այդ թվում՝ Թբիլիսիի պետական համալսարանում եւ պետական բժշկական համալսարանում թափուր է մնացել 14 569 տեղ:

*Պատրաստեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆԸ ԿԼԻՆԻ C ՀԵՊԱՏԻՏԸ ՀԱՂԹԱՀԱՐԱԾ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԻՐԸ

*Վրաստանում մեկնարկեց հեպատիտ C-ի ծրագրի նոր քարոզարշավը: Դրա հետ կապված միջոցառումը բացեցին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն եւ առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն:*

- Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ հեպատիտը 21-րդ դարի ամենածանր մարտահրավերն է: Վիրուսային հեպատիտը այնպիսի հիվանդություն է, որի դեմ պայքարը պահանջում է առավելագույն պայքար,- այս մասին հայտարարել է վարչապետ Մամուկա Բախտաձեն՝ հեպատիտ C-ի դեմ նոր արշավի՝ STOP C - ի մեկնարկի հետ կապված միջոցառմանը:

Նրա խոսքով, ցավոք, հեպատիտ C-ն հիվանդություն է, որի նկատմամբ բազմաթիվ երկրներ անպաշտպան են եւ Վրաստանն էլ դրանց թվում էր:

- 2012 թվականին մենք հայտարարեցինք, որ մեր գլխավոր առաջնահերթությունը կլիներ մարդը, եւ առաջին քայլը առողջապահության բյուջեի ավելացումն էր եւ այդ աճի մեջ առաջին տեղն է զբաղեցրել հեպատիտ C-ի դեմ պայքարը: Սա լուրջ մարտահրավեր է, որն ունի աշխարհը, մեր քայլերը միտված էին այդ մարտահրավերների հաղթահարմանը եւ, առանց չափազանցնելու, կարելի է ասել, որ Վրաստանն այն երկիրն է, որը հաջողությամբ հաղթահարել է դա,- հայտարարել է վարչապետը:




Նա ամերիկացի գործընկերներին շնորհակալություն է հայտնել՝ հեպատիտ C-ի բուժմանը անհրաժեշտ դեղամիջոցներով ապահովվելու համար:

Բախտաձեի խոսքով, այսօր բնակչության մոտ երրորդ մասն անցել է սկրինիգ, եւ բուժման ծրագրին ներգրավված է շուրջ 50 000 մարդ:

- 2020 թվականին Վրաստանը հնարավոր է դառնա առաջին երկիրը, որը հաջողությամբ հաղթահարել է հեպատիտ C հիվանդությունը՝ նրա վերացման տեսանկյունից,- նշել է վարչապետը:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՁԱՐՄԱՆԱԼԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



## ԱԼԿՈՀՈԼԸ՝ ՕԳՏԱՎԷ՞Տ

***Ալկոհոլի բայասական ազդեցության մասին շատ է գրվել, եւ դա համարվում է անփարակուսելի փաստ, թեպետ, վերջերս համայանցում դրված նյութի համաձայն, պարզվում է, որ ալկոհոլն էլ ունի դրական կողմեր: Ցավոք, մանրամասներ չկան: Ցանկալի կլինեն իմանալ դրա դետալները:***

***Վ.Մուրադյան***

***Բոլնիսի***

Լոնդոնի Յամալսարանական քոլեջի եւ Քեմբրիջի համալսարանի գիտնականները բացահայտել են, որ չափավոր քանակություններով ալկոհոլ գործածող մարդիկ ավելի հազվադեպ են հիվանդանում սիրտ-անոթային հիվանդություններով նրանց համեմատությամբ, ովքեր երբեք չեն խմել: Գիտական աշխատության արդյունքների մասին հաղորդվում է EurekAlert!-ի մամուլի տեղեկագրում:

Մասնագետները վերլուծել են հետազոտությունների ընթացքում ստացված տվյալները, որոնց, ընդհանուր առմամբ, մասնակցել է 35 հազար 132 մարդ: Գնահատվել է ոգելից խմիչքների գործածման մակարդակը, ըստ որում չափավոր դոզա է համարվել շաբաթական 168 գրամ էթանոլը տղամարդկանց համար եւ շաբաթական 112 գրամ էթանոլը կանանց համար: Դիտարկումների ամբողջ ժամանակահատվածում գրանցվել է սրտաանոթային հիվանդության 1718 դեպք (փորձարկվողների ամբողջ թվի 4,9 տոկոսը), ընդ որում մահացել է 325 մարդ:

Պարզվել է, որ ամենից հաճախ սիրտ-անոթային հիվանդություններով տառապել են նրանք, ովքեր դադարել են խմել (խմբում հիվանդացությունը՝ 6,1 տոկոս): Ավելի քիչ չափով են տուժել նրանք, ովքեր ալկոհոլ են գործածել չափավոր քանակություններով (հիվանդացությունը՝ 3,8 տոկոս, մահացությունը՝ 0,6 տոկոս): Սակայն գիտնականները նշում են, որ մեծ տարբերություն է դիտվել սոսկ 55-ից բարձր տարիքի կանանց մոտ:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ԱՂԵՏԻ ԱԶԴԱՆՇԱՆ

***1908 թվականի այս օրը՝ հուլիսի 1-ին, SOS-ը դարձավ աղետի միջազգային ազդանշան: Այն օգտագործվում մէ Մորզեի այբուբենի հիման վրա: Ազդանշանն իրենից ներկայացնում է՝ «3 կետ-3 գծիկ-3 կետ»:***

Պատմության մեջ առաջին անգամ ծովում աղետի մասին ազդանշանը հաղորդվել է 1900թ. փետրվարի 6-ին, երբ ֆիննական Կոտկա քաղաքում գտնվող ռադիոկայանը «Երմակ» սառցահատին անլար հեռագիր է ուղարկել պոկված սառցաբեկորի վրա գտնվող 50 ձկնորսներին փրկելու հրամանով: SOS հապավումը նշանակում է՝ Save Our Spirits (Փրկեք մեր հոգիները), Save Our Ships (Փրկեք մեր նավերը), Swim Or Sink (լողացեք կամ խեղդեք), Stop Other Signais (դադարեցրեք այլ ազդանշանները), կա նաեւ ռուսերեն տարբերակը՝ փրկեք մահից:

XX դարի վերջին սկսել են գործել աղետի մասին ահազանգող նոր համակարգեր:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

## ՄԻԱՅՆԱԿՆԵՐԸ ՀԱԿՎԱԾ ԵՆ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԻ

***Կալիֆոռնիացի գիտնականները պարզել են, թե, արդյոք, ուղեղի աշխատանքի վրա ազդո՞ւմ է մարդու սոցիալական մեկուսացումը:***

Պարզվել է, որ միայնությունն ազդում է ագրեսիայի հաճախակի բռնկումների եւ ցածր սթրեսակայունության վրա:

Յետազոտողները մի շարք փորձարկումներ են կատարել, որոնցում մկներին պահել են մեկուսացման մեջ: Վերջիններիս վարքն անհատական է եղել: Դա կախված է եղել նրանից, թե որքա՞ն երկար եւ ի՞նչ պայմաններում են նրանք միայնության մեջ եղել:

Օրինակ, եթե կրծողը մեկուսացման մեջ անցկացրել էր երկու շաբաթ, ապա նա դառնում էր շատ ագրեսիվ ու գրգռված: Սակայն, երբ մուկն առնչվում էր այլ առանձնյակների հետ, նրա ռեակցիաները դանդաղում էին, եւ նա դադարում էր շարժվելուց:

Բանն այն է, որ մկների օրգանիզմում առկա է նեյպոկինին B նյութը, որը կա նաեւ մարդկանց մոտ: Այն բանից հետո, երբ կրծողները երկու շաբաթ անցկացնում էին միայնության մեջ, այդ նյութի մակարդակն ուղեղում խիստ բարձրանում էր: Դրանից ելնելով, մասնագետները որոշել են չեզոքացնել նեյպոկինինի ակտիվությունը մի դեղորայքի միջոցով, որը կիրառվում է շիզոֆրենիայի բուժման պարագայում:

Արդյունքը գերազանցեց բոլոր սպասելիքները: Մկներն իրենց լավ էին զգում երկար մեկուսացումից հետո: Եթե հետազոտեն նեյպոկինին հետագայում եւս, ապա ապագայում դա կօգնի մարդկանց մոտ դեպրեսիվ եւ տագնապային խանգարումների թերապիայի համար:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՔԱՆ Է ՊԵՏՔ ՔՆԵԼ ԱՌՈՂՋ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

***Սրտաբանության եվրոպական ընկերության մասնագետները որոշել են առողջության համար քնի լավագույն ժամաքանակը. համապատասխան մամուլի տեղեկագիրը հրապարակված է ընկերության պաշտոնական պորտալում:***



Ինչպես նշել է հետազոտության հեղինակը՝ դոկտոր Էպայմինոնդաս Ֆոնտասը, ներկայում բժշկությանը քիչ բան է հայտնի սիրտ-անոթային համակարգի վրա քնի ազդեցության մասին:

Յետազոտության ընթացքում գիտնականներն ուսումնասիրել են փոխադարձ կապը քնի տեւողության եւ սիրտ-անոթային հիվանդությունների զարգացման միջեւ: Վերլուծվել են ավելի քան 1 միլիոն չափահաս մարդկանց 11 հետազոտությունների տվյալները, որոնց մոտ ավելի վաղ սրտի հետ կապված խնդիր չի եղել: Յետազոտված պացիենտներին բաժանել են երեք խմբի, որոնցից մեկում մարդիկ օրական քնում էին ութ ժամից ավելի, մյուս խմբում՝ վեց ժամից պակաս, իսկ երրորդում՝ վեցից մինչեւ ութ ժամ:

Յետազոտության արդյունքներով՝ գիտնականները պարզել են, որ օրական վեց ժամից պակաս տեւողությամբ քունը սրտի իշեմիկ հիվանդության եւ ինսուլտի զարգացման ռիսկը մեծացնում է 11 տոկոսով այն դեպքում, երբ ութ ժամից ավելի քնի տեւողությունը՝ արդեն 33 տոկոսով:

Այսպիսով՝ քնատությունը եւ շատ քնելը տարբեր չափով մեծացնում են սրտի հիվանդություններից եւ ինսուլտից մահվան ռիսկը դիտարկումների միջին ժամանակաշրջանի ընթացքում, որը կազմել է շուրջ իննուկես տարի, պարզել են մասնագետները:

Ֆոնտասը նշել է, որ կարճատեւ քնի դեպքերը հազիվ թե լուրջ վնաս հասցնեն առողջությանը, սակայն անցկացված գիտափորձի արդյունքներով՝ այն բանի բավականաչափ տեղեկություններ են հավաքվել, որ անհրաժեշտ է խուսափել չափից ավելի շատ քնելուց:

Ճիշտ քունը առողջ կենսակերպի կարեւոր բաղադրիչն է, եզրափակել է գիտնականը:

Ավելի վաղ Մեծ Բրիտանիայի Քիլի համալսարանից հետազոտողները եկել են այն եզրակացության, ավելի քան ութ ժամ տեւողությամբ քունը կարող է վնասել նաեւ մարդու հոգեբանությունը:

## ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ՔՆԵԼ

***Քնել պետք է ամբողջությամբ մթության մեջ: Նույնիսկ քիչ լույսը գիշերային լամպից կամ էլեկտրոնային զարթուցուցիչից կխթանի նյարդային համակարգը:***



Տարածքում պետք է բավական հով լինի: Չարժե ննջարանում պահել այնպիսի բաներ, որոնք խթանում են փոշու կուտակումը՝ բույսեր, գրքեր, գորգեր: Չափազանց չորությունը նույնպես բացասաբար է անդրադառնում քնի որակի վրա: Այդ պատճառով օգտագործեք օդի խոնավեցուցիչներ:

Քնելուց առաջ չարժե դիտել հեռուստացույց, խաղալ համակարգչային խաղեր եւ, ընդհանրապես, օգտագործել էլեկտրոնային տեխնիկա: Ննջասենյակը եւ երեխաների սենյակը դրանց համար չէ:

Անկողինը պետք է ազատ լինի, փափուկ: Ընդհանուր կանոն՝ ներքնակը կոշտ, բարձը՝ ցածր:

Սովորեցրեք ձեզ պառկել եւ արթնանալ նույն ժամին՝ անկախ շաբաթվա օրից: Օրգանիզմը շուտ է սովորում ռեժիմին եւ պահում նորմալ կենսաբանական ռիթմը:

Միջինում մենք քնի մեջ մտնում ենք 15 րոպեի ընթացքում: Եթե դուք ժամերով շուռումուռ եք գալիս անկողնում, ավելի լավ է վեր կենալ, 20 րոպե քայլել եւ կրկին պառկել: Եթե մեկ անգամից չի օգնում, կրկնեք նորից::

Կարեւոր է քնել 7-8 ժամից ոչ պակաս, սակայն, դրանից ավելի էլ է վնասակար: Եթե դուք ցերեկային քնի կարիք ունեք, այն չպետք է լինի 45 րոպեից ավելի եւ ցանկալի է դա անել մինչեւ 15.00:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ



Սիրել՝ նշանակում է տեսնել հրաշք, անտեսանելի ուրիշների համար:

* * *

Ես չեմ ներում նրան այն բանի համար, որ ես սիրել եմ նրան:

* * *

Նա, ով երջանիկ է եղել սիրո մեջ՝ գաղափար չունի նրա մասին:

* * *

Միշտ վերադառնում են առաջին սիրուն:

* * *

Սերը նույն բարությունն է, նույն ներքին լույսը, որ ողողում է մարդուն եւ պարգեւում նրան անսպառ ջերմություն:

* * *

Պետք է լինել մի քիչ նման միմյանց հասկանալու համար, բայց պետք է լինել մի քիչ տարբեր՝ միմյանց սիրելու համար:

* * *

Ով ուժգին է սիրում, քիչ է խոսում:

* * *

Ով թույլ է սիրում, նա ձանձրանում է:

* * *

Մենք երբեմն սիրում ենք դրան անգետ լինելով, իսկ հաճախ սին զառանցանքը անվանում ենք սեր:

* * *

Սերը կարող է փոխարինել ամեն ինչին, իսկ սիրո փոխարեն չկա ոչինչ ոչ մի տեղ:

* * *

Սիրված լինելը ավելին է, քան հարուստ լինելը, քանզի սիրված լինել՝ նշանակում է լինել բախտավոր:

* * *

Կյանքն առանց սիրո ես համարում եմ մեղսալից ու անբարոյական վիճակ:

* * *

Սիրել՝ նշանակում է նայել ոչ թե միմյանց, այլ նայել միեւնույն ուղղությամբ:

* * *

Սերը ապրելու ցանկությունն է:

* * *

Սերն անարդարություն է. բայց արդարությունն այստեղ բավական չէ:

* * *

Սրատես է միայն սիրտը: Ամենից գլխավորը աչքերով չես տեսնի:

* * *

Ճշմարիտ սերը մեզ միշտ դարձնում է ավելի լավը, ինչպիսի կին էլ որ այն հարուցի:

* * *

Վերջին հաշվով սերը ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդու սեփական արժանիքների անդրադարձումը ուրիշների մեջ:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՑԱՀԱՏԻԿՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ



*Օգոստոսի 29-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ, կառավարությունում, տեղի է ունեցել խորհրդակցություն՝ Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողներին հողերի մշակության համար հասցեական աջակցության տրամադրման վերաբերյալ:*

Գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյանը ներկայացրել է այդ նպատակով մշակված ծրագրի նախագիծը, որով առաջարկվում է ուղղակի աջակցություն տրամադրել՝ որոշակի կատեգորիայի գյուղացիական տնտեսություններին: Նախատեսվում է այն իրականացնել որպես պիլոտային ծրագիր՝ այս տարվա աշնանացանի ժամանակահատվածի համար: Նախարարը նշել է, որ խոսքը գնում է մոտ 2700 հեկտարի մասին, եւ ակնկալվում է, որ պետական աջակցության ծավալը կկազմի մոտավորապես 185 մլն դրամ: Ծրագրի նպատակը հանրապետությունում վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի ավելացումն է, հացահատիկային ապահովվածության մակարդակի բարձրացումը եւ տարածքային անհամամասնությունների մեղմումը:

Նիստում քննարկվել են նախորդ տարիներին պետական աջակցությամբ մի շարք՝ դիզվառելիքի, պարարտանյութի, սերմացուի ծրագրերի արդյունավետությանը եւ հասցեականությանը, առաջարկվող շահառու համայնքների ընտրությանը, կոոպերատիվների ձեւավորմանը վերաբերող եւ այլ հարցեր:

Վարչապետը, ամփոփելով քննարկումը, ընդգծեց, որ կառավարությունը քայլեր է ձեռնարկում գյուղատնտեսության ոլորտին աջակցելու եւ այդ աջակցության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, եւ այս առումով կարեւոր է, որպեսզի քննարկվող ծրագրով տրամադրվելիք պետական աջակցությունը հասնի ուղիղ շահառուին՝ առանց միջնորդավորված օղակների:

## ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԿՍԱՀՄԱՆԻ ԶԵՂՉԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

*Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանու հրամանով, Վրաստանում, սեպտեմբերի 15-ից, արգելվում է ցորենի կամ ցորենաաշորային ալյուրի ներմուծումը կամ արտահանումը ավտոտրանսպորտով:*

Վրաստանի ֆինանսների նախարարի կարգադրության մեջ ասվում է, որ ցորեն կամ ցորենաաշորային ալյուր կարելի է տեղափոխել երկաթուղային կամ ծովային տրանսպորտով, իսկ ինչ վերաբերում է ավտոտրանսպորտին, ապա այս տրանսպորտային միջոցները կարող են թույլատրվել առանձնահատուկ դեպքերում՝ Ֆինանսների նախարարության եկամտային ծառայության համաձայնությամբ:

Այդ մշակաբույսերի Հայաստան բեռնափոխադրումների սակագների բարձրացման կանխման համար բանակցություններ են ընթանում վրացական երկաթուղու եւ Հարավկովկասյան երկաթուղու (Հայաստան) ղեկավարների միջեւ:

Նախնական համաձայնությամբ՝ վրացական երկաթուղին հայաստանյան փոխադրողների համար կիրականացնի զեղչեր, որի արդյունքում ակնկալվում է, որ ապրանքների փոխադրման ծախսերը չեն ավելանա:

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ ԱՃ Է ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ

*Հունվար-հուլիս ամիսներին աճ է արձանագրվել Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերում:*

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ արդյունաբերական արտադրանքի ծավալը 2018 թ. հունվար-հուլիս ամիսներին կազմել է 104.3 տոկոս, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 104.6 տոկոս:

Հայաստանում շինարարության ոլորտում եւս այս տարվա 8 ամսում աճ է արձանագրվել՝ 10.4 տոկոս.: Առեւտրի շրջանառությունը նախորդ տարի կազմել է 108.9 տոկոս, ծառայությունների ծավալը՝ 118.7 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը՝ Հայաստանում անցած տարվա ընթացքում աճել է 0.8 տոկոսով:

Միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 4 տոկոսով. պետական հատվածում աճը կազմել է 1,1, մասնավորում՝ 4.8 տոկոս: 26.8 տոկոս աճ է արձանագրվել արտաքին ապրանքաշրջանառության ծավալներում: Միաժամանակ, արտահանումն աճել է 17.3 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 32.1 տոկոսով:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ



*Օգոստոսի 30-ին, Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ընդունել է Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանին:*

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախարարին տեղեկացրել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի մասին:

Վեհափառ Հայրապետը, մասնավորապես, անդրադարձ է կատարել Մայր Աթոռի հովանու ներքո գործող երեք հոգեւոր կրթական հաստատությունների եւ հանրակրթական դպրոցների գործունեությանը, ինչպես նաեւ՝ խոսել Հայաստանի տարբեր քաղաքներում հիմնադրված տասը հայորդյաց տներում մանուկների եւ պատանիների կրթության եւ օգտաշատ այլ ծրագրերի մասին:

Գարեգին Բ Հայրապետը տիար Արայիկ Հարությունյանին տեղեկություններ է փոխանցել նաեւ կրթության ոլորտում Մայր Աթոռի կողմից իրականացվելիք ապագա ծրագրերի մասին:

Իր հերթին, ՀՀ Կրթության եւ գիտության նախարարն անդրադարձ է կատարել կրթության ոլորտում առկա խնդիրներին եւ մարտահրավերներին, խոսել նախաձեռնվելիք բարեփոխումների մասին:

Զրույցի ընթացքում խոսվել է նաեւ Սփյուռքի դպրոցներում մայրենի լեզվի ուսուցման կազմակերպման եւ Հայաստանի հանրակրթական դպրոցներում «Հայ եկեղեցու պատմության» առարկայի դասավանդման ընթացքի մասին:

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽԵԼ ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ

*Հայաստանի սփյուռքի նախարարությունը պատրաստ է՝ աջակցել սփյուռքում պատմա-մշակութային նշանակության իրերն ու մասունքները Հայաստան տեղափոխել ցանկացող անձանց:*



Հայաստանի սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանի խոսքով, բազմաթիվ են մեր այն հայրենակիցները, ովքեր ոչ միայն տիրապետում են սփյուռքում հայկական պատմա-մշակութային նշակության իրերի մասին ինֆորմացիայի, այլ նաեւ իսկապես ունեն այդպիսիները: «Դրանցից շատերը պահպանվել են շատ վաղ շրջանից, եւ մեր պատմա-մշակութային ժառանգության մի մասն են: Կա իսկապես մեծ հավանականություն՝ դրանք Հայաստան փոխադրելու: Մենք ընթացիկ աշխատանքներ ենք կատարում ՝ դրանցից շատերը Հայաստան բերելու համար: Մենք աշխատում ենք նրանց հետ, ովքեր պատրաստ են դրանք հանձնել պետությանը»,- ասաց նախարարը՝ հավելելով, հիմա 3-4 նման դեպք կա:

Անդրադառնալով դիտարկմանը, որ նման շատ իրերի արտերկրում մնալն ու միջազգային հանրությանը ներկայացնելը, միգուցե, ավելի ձեռնտու լինի, նախարարը նշեց՝ իրենք աշխատում են միայն նրանց հետ, ովքեր ցանկություն են հայտնում իրենց այդ արժեքավոր իրը բերել Հայաստան: Չեն վարում այնպիսի քաղաքականություն, որ արտերկրում գտնվող հայկական պատմական կարեւոր նշանակության բոլոր արժեքները տեղափոխվեն Հայաստան: Նախարարության համար քննարկելի է նաեւ այն, որ աշխատանքներ տարվեն՝ դրանք աշխարհի տարբեր թանգարաններում ներկայացնելու համար:

### ԵՐԵՎԱՆԻ 2800-ԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-21-ԻՆ

ԵՐԵՎԱՆ 2800

***Երեւանի օրը նշելու եւ Երեւանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված «Էրեբունի-Երեւան» տոնական միջոցառումները, որոնք նախատեսված էին սեպտեմբերի 29-ին եւ 30-ին, տեղի կունենան հոկտեմբերի 20-ին եւ 21-ին: Այդ մասին որոշման նախագիծը հաստատվեց կառավարության նիստում:***

***Տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը նշեց, որ օրերի տեղափոխությունը պայմանավորված է հոկտեմբերի 7-12-ը Երեւանում կայանալիք Ֆրանկոֆոնիայի գագաթաժողովի անցկացմամբ, դրա շրջանակում միջոցառումների լայն ծավալով, Երեւանի ավագանու նոր ընտրությունների կազմակերպմամբ, ինչպես նաեւ՝ մայրաքաղաքի 2800-ամյակը բարձր մակարդակով կազմակերպելու անհրաժեշտությամբ: Նշենք, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ ստեղծվել է Երեւանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջոցառումները նախապատրաստող եւ կազմակերպող հանձնաժողով: Այն մինչեւ 2018 թվականի օգոստոսի 31-ը մշակելու եւ Հայաստանի վարչապետին է ներկայացնելու Երեւանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված միջոցառումների ծրագիրը: Հանձնաժողովի նախագահն է Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Ավինյանը:***

### ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ

***Սեպտեմբերի 23-ին անցկացվելիք Երեւանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցելու համար՝ Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողով անհրաժեշտ փաստաթղթեր է ներկայացրել 4 դաշինք եւ 9 կուսակցություն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչեւ սեպտեմբերի 3-ը բոլոր հայտերը կուսումնասիրի եւ կհայտարարի ընտրություններին մասնակից քաղաքական ուժերի անվանումները:***

***Երեւանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցելու հայտ են ներկայացրել «Ռեֆորմիստների» կուսակցությունը, ԲՀԿ-ն, «Հայկազուններ» կուսակցությունը, ՀԺԱՄ-ը, «Երեւանցիներ» դաշինքը, «Իմ քայլը» դաշինքը, ՀՅԴ-ն, «Երեւանի հանրություն» դաշինքը, «Ժառանգություն», «Օրինաց երկիր», «Երկիր Ծիրանի» եւ «Ժողովրդավարական ուղի» կուսակցությունները:***

### 200 ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ՝ ՉԻՆԱՍՏԱՆԻՑ

***Չինաստանը անհատույց նվիրաբերում է 200 շտապ օգնության ռեանիմոբիլներ, շտապ օգնության գծային մեքենաներ, դրանց օժանդակ սարքավորումները եւ պահեստամասերը: Այդ մասին որոշման նախագիծը հաստատվեց կառավարության նիստում:***

***«Նախագծով նախատեսվում է շտապ օգնության մեքենաները եւ դրանց օժանդակ սարքավորումները նվիրաբերել Երեւանում եւ մարզերում գործող բժշկական կազմակերպություններին՝ շտապ օգնության աշխատանքը կազմակերպելու նպատակով»,- ասաց Հայաստանի առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը: Նրա խոսքով՝ մարզերում եւս ունենալու ենք ռեանիմոբիլներ, որոնցով կկարողանան միանգամ հիվանդներին տեղափոխել Երեւան: Նշված 200 ավտոմեքենաներից 65-ը ռեանիմոբիլներ են, որոնցից 10-ը՝ պահվում են որպես ռեզերվային:***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՍԵՊՏԵՄԲԵՐ**



*1.09.2018 Նիկիայի Սուրբ ժողովի 318 Հայրապետների հիշատակության օր*

*3.09.2018 Սուրբ Անդրե զորավարի, նրա բանակի, Կալինիկոսի եւ Դոմետիոսի վկաների հիշատակության օր*

# ՎԵՐԱՕԾՎԵՑ ԲԱԼԽՈՅԻ «ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ» ԵԿԵՂԵՑԻՆ

***2018 թվականի օգոստոսի 25-ին, տոնական տրամադրություն էր թեւածում Ախալքալաքից դեպի հյուսիս 12 կմ հեռավորությամբ գտնվող, ընդամենը 160 ընտանիք ներառող Բալխո գյուղը:***



Գյուղի բնակիչները՝ մեծից փոքր, դիմավորում էին տարբեր վայրերից եկած բալխոցիներին, նաեւ հարեւան բնակավայրերից, Հայաստանից եւ Ռուսաստանից ժամանած հյուրերին, որ եկել էին մասնակցելու գյուղի «Սուրբ Հարություն» եկեղեցու վերաօծման հանդիսավոր արարողությանը:

19-րդ դարի կառույց եկեղեցին, խորհրդային տարիներին կորցնելով իր գործառույթները, վերածվել էր կոլտնտեսության պահեստի, իսկ ետխորհրդային շրջանում՝ մատնվել անուշադրության: Աղոթավայրն եւ անխնամ մնացած եկեղեցին վերանորոգվեց գյուղի արժանավոր զավակ, ռուսաստանաբնակ Մեսրոպ Մովսիսյանի բարերարությամբ, համագյուղացիներին ընձեռելով Աստծով ապրելու, աղոթքով գործելու հնարավորություն:

Եկեղեցին վերաօծվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ եւ արժանապատիվ Տեր Տաթեւ քահանա Մարուքյանի, Տեր Թադեոս քահանա Տեր-Մկրտչյանի ու Տեր Տիգրան քահանա Մխիթարյանի մասնակցությամբ:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանը եւ Սամվել Մանուկյանը, Ախալքալաքի շրջանային ժողովի նախագահ Նաիրի Իրիցյանը, Ախալքալաքի շրջանային ժողովի պատգամավորներ, հասարակական գործիչներ, Վրաստանում պաշտոնական այցով գտնվող Եվրասիայի Հայ Ավետարանչական ընկերության ներկայացուցիչ եւ Հայ Ավետարանական եկեղեցիների միության նախագահ Ռենե Լեւոնյանը:

Այնուհետեւ, «Սուրբ Հարություն» եկեղեցու վերաօծման կապակցությամբ, հարակից տարածքում կայացավ տոնահանդես, որին իրենց մասնակցությունն էին բերել Վիրահայոց թեմի Արագովա գյուղի «Խրիմյան հայրիկ» կենտրոնի սաները, շրջանի հարակից գյուղերից եկած անհատ կատարողները:

Հիշեցնենք, որ, դեռեւս 2004 թվականին, եկեղեցու առաջին մասնակի վերանորոգումից հետո, փոխառաջնորդ, հոգեշնորհ Տեր Բաբգեն աբեղա Սալբիյանի կողմից կատարվել էր եկեղեցու օրհնության կարգ, եւ տաճարը դարձել էր Վիրահայոց թեմի գործող եկեղեցիներից մեկը:

## ԳՐԱԴԱՐԱՆ

# ԳՐՔԻ ԴԵՐԸ ՄՆՈՒՄ Է ՇԱՏ ՈՒ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ

***Մենք այսօր ապրում ենք գիտության եւ տեխնիկայի բարձունք՝ 21-րդ դար, եւ բոլորս տեսնում ու զգում ենք, թե ժամանակակից մարդը, ինչպիսի մեծ զարգացում է ապրում: Մտնում են համացանց, ստանում համապատասխան տեղեկություն՝ աշխարհում տիրող իրավիճակից:***

Բայց այս ամենի շարքում, իհարկե, իր անփոխարինելի տեղն ունի գիրքը, այդ անլեզու եւ անշունչ առարկան, որն իր մեջ պարունակում է աշխարհի ամեն բնագավառի ու ամեն տեսակի իմաստնություններ: Թերեւս մարդկության ի հայտ գալուց հար, գիրքը մնում է եւ, երեւի, հավերժ կմնա մարդու անփոխարինելի բարեկամը:

Չկա վատ գիրք, ամեն գիրք իր իմաստն է թողնում մարդու ապրած կյանքում, զարգացնում մարդու մտավոր կարողությունները, բացում աչքերն ու լեզուն, դարձնում մարդուն զարգացած ու բանիմաց:

Գրքի դերը մեծ ուշադրության է արժանանում Ախալքալաքի քաղաքային գրադարանում իր աշխատակիցներով եւ մի շարք գյուղական գրադարաններով: Որի համար մենք շնորհապարտ ենք գրադարանների միավորման տնօրեն՝ Թեկլե (Ժենյա) Վախթանգիշվիլուն, գրեթե չորս տասնամյակ նա աշխատում է այս ցանցում, իր աշխատանքային մեծ փորձի շնորհիվ լավ է կատարում աշխատանքային պարտականությունները, անցկացնում ամենամյա սեմինարներ, հիշարժան միջոցառումներ ու հանդիպումներ:

Վերջերս այդպիսի հանդիպում կայացավ Հայաստանից ժամանած գրողների՝ Սուրեն Դավթյանի եւ Լանդա Ալվարյանի հետ: Ե՛վ Ախալքալաքից, ե՛ւ շրջանի գյուղերից մասնակցեցին ակտիվ ընթերցողներ ու իրենց հիանալի արտասանություններով հիացրին ներկաներին: Գրողը մեծ հիացմունքով լսեց եւ ծանոթացավ Ախալքալաքում տիրող իրավիճակին, լսեց նաեւ գեղեցիկ վրացերենով արտասանությունները եւ հիացմունքը չէր կարողանում զսպել, շնորհակալություն հայտնեց մեր «Ժենյային»՝ այդպես են դիմում նրան աշխատակիցները, եւ ցանկացավ նորից ու նորից հանդիպել եւ օգնել Հայաստանից ստանալ նոր գրքային ֆոնդ, քանզի աշխատում են հին ու մաշված գրքերով եւ մեծ սիրով հասցնում ընթերցողին: Ցանկանում ենք գրադարանի անձնակազմին նորանոր հանդիպումներ եւ սրտաբուխ ելույթներ, որպեսզի ապագա սերունդը սիրի գիրքը՝ գիտելիքների աղբյուրը:



Թեկլե Վախթանգիշվիլի

***ԱՆՆՄԱՆ ԱԲՈՅԱՆ***
*Բարալեթ գյուղի գրադարանավարուհի*
*Ախալքալաքի մունիցիպալիտետ*

## ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

# ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎ ՈՒԵՖԱ-ԻՑ ԳՈՒՐԱՄ ԿԱՇԻԱՅԻՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ



Վրաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի փոխավագ Գուրամ Կաշիան վիրավորական արտահայտություններով հարձակման է ենթարկվել սոցցանցում: Նշենք, որ նրանք սպառնում են բոյկոտի ենթարկել սեպտեմբերի 9-ին Թբիլիսիում անցկացվելիք Վրաստան-Լատվիա հանդիպումը:

Ֆուտբոլիստը հարձակման օբյեկտ դարձավ նրանից հետո, երբ ՈՒԵՖԱ-ի որոշմամբ՝ նա ԼԳԲՏ-հանրության (սեռական փոքրամասնության) պաշտպանության համար արժանացավ հատուկ պարգեւի:

Նրա վարքագիծը դատապարտողներին զուգընթաց, սոցցանցում սկսել է գործել՝ «Գուրամ, մենք քեզ հետ ենք» քարոզարշավը:

Նշենք, որ Գուրամ Կաշիայի պարգեւը ՈւԵՖԱ-ի նախագահից ստացավ Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Լեւան Կոբիաշվիլին:

# Խ Ա Չ Բ Ա Ռ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Լեհ կոմպոզիտոր Քշիշտով ...: 6.Մուգ գույն: 10.«Արի տուն» ծրագրի մասնակիցների ճամբարը: 11.Նախահայր, նախնի: 13.Խորհրդային դերասանուհի ... Լուչկո: 14.Դատարկ, ունայն: 15.Նախկին պիոներական ճամբար Ղրիմում: 19.Լեռ Հայաստանում: 21.Քաղաք Ռուսաստանում: 24.Սպորտային հագուստի ֆիրմա: 25.Ոչ խիտ, ցանցառ: 27.Լինում է եւ այդպիսի հյուր: 28.Լեւոն Շանթի հերոսուհի: 29.Հին աշխարհամաս: 30.Քարը կտրողը, հատողը: 32.Խանութների ցանց Թբիլիսիում: 33.Հարյուր տարի: 34.Ծովային մարջան, բուստ: 37.Հարցական դերանուն: 38.Լիքը, առատ: 39.Մեսրոպյան այբուբենի զինվոր: 40.«... ուշ չէ» (միտք): 41.Վրացու անուն: 43.Կահույքի մաս: 45.Քաղաք Շվեյցարիայում: 47.Դրաստամատ Կանայան: 48.Հոմերոսի հերոսներից: 49.Արմեն Տիգրանյանի հայտնի օպերան: 50.Շաքե Թուխմանյանի կինոռեժիսոր որդին՝ ... Մունչյան: 51.Աշուղ Ջիվանու երգերից:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Չեխիայի քաղաքամայրը: 2.Հեղուկ վառելիք: 3.Եվրոպական տարադրամ: 4.Սփյուռքահայ գրող Համաստեղի ստեղծագործություններից՝ «... էն օրերուն»: 5.Ալկոհոլային խմիչք: 7.«... մի ծաղիկ հողից դուրս ելա» (Գուսան Շահեն. «Անցա, գնացի»): 8.Լեհ կոմպոզիտոր եւ դաշնակահար: 9.Հովհ.Թումանյանի լեգենդներից: 12.Կապի տեսակ: 16.Ձայնարկություն՝ երնեկ, ափսոսանք: 17.Մշակութային կոթող Երեւանում: 18.Լեռնաշղթա Հայաստանում: 20.«Ա՜խ, ..., ... կարոտել եմ ձեզ» (Հ.Բադալյանի երգացանկից): 22.Հանրահայտ դերասան ... Ավետիսյան: 23.Գետ Վրաստանում: 26.Ուրարտուի թագավոր: 28.Մասիս, Աբուլ: 29.Գարնան ամիս: 31.Խմել-...: 35.Առանց վարանելու, անկասկած: 36.Թռչերի ողջ տարողությամբ ծիծաղ: 40.Փափագել, անրջել: 41.Ավ.Իսահակյանի սերը: 42.Թմրանյութի տեսակ: 44.«Վիվասել ՄՏՍ» բջջային հեռախոսացանցի ղեկավար ... Յիրիկյան: 46.Գիքորի քույրը: 49.Ժխտական նախածանց:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Բանավեճ: 9.Աբլամ: 10.Գզիր: 11.Կատարում: 13.Պուրակ: 16.Քոս: 17.Սեր: 19.Լամուկ: 22.Ուիթնի: 24.Բուխարա: 25.Պոլի: 27.Կապարճ: 29.Ազատել: 32.Ամսանուն: 33.Կիսաեփ: 35.Անիս: 37.Սեկ: 39.Լհասա: 40.Հօդս: 43.Կեղ: 44.Մայն: 47.Նիմ: 49.Վավրա: 50.Բրիջ: 53.Թիկա: 54.Գեա: 55.Լավա: 57.Ձուր: 58.Տասնոց:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Թանաք: 2.Մանաս: 3.Նեգուս: 4.Ճարպ: 5.Քլոր: 6.Դմակ: 8.Ճզմել: 12.Տորթ: 14.Ուրախ: 15.Ապուր: 18.Դիոր: 19.Լուիզա: 20.Մարտունակ: 21.Կարլ: 23.Նպատակ: 26.Լճափ: 28.Ամիս: 29.Ասա: 30.Անահ: 31.Ենիսեյ: 34.Սենյակ: 36.Սաղ: 38.Ադի: 41.Օնագր: 42.Սմբատ: 45.Ավիշ: 46.Նվագ: 48.Նիլս: 51.Ջան: 52.Հաց: 56.Վո:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445